ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, գ. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

28 ՄԱՐՏԻ 2013 ԹՎԱԿԱՆ N 10-Ն

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 07.02.2013 թ. N 130-Ն որոշման համաձայն ՀՀ Տավուշի մարզպետի և Բերդի քաղաքապետի միջև 15.03.2013թ. կնքված „Կապիտալ սուբվենցիայի հատկացման„ թիվ 12 պայմանագիրը

համայնքի ավագանին որոշում է

Համայնքի 2013 թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 2013թ. բյուջեի եկամտային մասի „Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին„ /4652/ հոդվածն ավելացնել 2000000 դրամ գումարի չափով՝ համաձայն N1 հավելվածի:

2)Բյուջեի ծախսային մասում 2000000 դրամ գումարի չափով ավելացնել „Բերդի մշակույթի տան„ պահպանման ծախսերի նախահաշվի /08.02.03.51/, „Կապիտալ սուբվենցիա„ /4652/ հոդվածը՝ համաձայն N2 հավելվածի:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված 1
Ընդդ համայնքի ավագանու
2013 թ. մարտի 28-ի
N 10-Ն որոշման

2013 թվականի համայնքի տեղական եկամուտներն ըստ առանձին հոդվածների

Հ/Հ	ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԸՍՏ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ	/հազար դրամ/
	ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	
1	ՀՈՂԻ ՀԱՐԿ	6000,0
2	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ	13000.00
3	ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ	3000.00
4	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ	4500.00
5	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1000.00
6	ՎԱՐՉԱՎՃԱՐՆԵՐ	4000.00
7	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ	10500.00
8	ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	4000.00
	ԸՆԴԱՄԵՆԸ	46000,0
	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	
9	ԴՈՏԱՑԻԱ	111083,40
10	Ազգային նվագարաններ	2132.80
11	ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2655.0
12	ԿԱՊԻՏԱԼ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ	2000.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	117871,20
12	ՏԱՐԵՍԿԶԲԻՆ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ	3605,3
13	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	3605,3
14	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	
	ԱՄԲՈՂՋԸ	167476,50

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, գ. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

28 ՄԱՐՏԻ 2013 ԹՎԱԿԱՆ N 11-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ 3 ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԸ, 1 ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԸ ԵՎ 1 ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006 թ. N 912-Ն որոշման 35-րդ կետի գ) ենթակետով և 34-րդ կետով

համայնքի ավագանին որոշում է

1.Խորենացու 43/13 հասցեում գտնվող 40.68/34.61 քմ մակերեսով ավտոտնակը՝ 44748 դրամով, և նրա պահպանման ու սպասարկման 23.76քմ մակերեսով հողամասը՝ 19246 դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Մելանյա Մանուչարյանին:

2.Մաշտոցի 82/9 հասցեում գտնվող 5.8/3.86քմ մակերեսով առևտրի սրահը՝ 57420 դրամով, և նրա պահպանման ու սպասարկման 5.8քմ մակերեսով հողամասը՝ 4698 դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Ռիմա Հարությունյանին:

3.Մաշտոցի 22/6 հասցեում գտնվող 22.62/14.18 քմ մակերեսով օժանդակ շինությունը՝ 49764 դրամով, և նրա պահպանման ու սպասարկման 14.18քմ մակերեսով հողամասը՝ 11486 դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արսեն Ռուբենի Պողոսյանին:

4.Տերյան 15/2 հասցեում գտնվող 87.68/70.66 քմ մակերեսով ավտոտնակը՝ 96448 դրամով,և նրա պահպանման ու սպասարկման 43.8 քմ մակերեսով հողամասը՝ 35478 դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Հասմիկ Վազգենի Մելիքբեկյանին:

5.Տերյան 15/3 հասցեում գտնվող 69.23/45.72քմ մակերեսով ավտոտնակը՝ 76153 դրամով, և նրա զբաղեցրած 90 քմ մակերեսով հողամասը՝ 72900 դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Իրինա Բաղալյանին:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, գ. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamayng@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

28 ՄԱՐՏԻ 2013 ԹՎԱԿԱՆ 12-Ա

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՎ ՏԱՎՈՒՇԻ ԲԱԺՆԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով

համայնքի ավագանին որոշում է

ՀՀ ոստիկանության ՄՎ Տավուշի բաժնին անհատույց /մշտական օգտագործման/ տրամադրել 178.45 քմ մակերեսով հողամաս՝ կառուցապատման նպատակով:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, գ. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

28 ՄԱՐՏԻ 2013 ԹՎԱԿԱՆ 13-Ա

„ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ„ ՀԿ-ԻՆ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ԱԺ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ, Հայաստանի ավագանիների ասոցիացիայի նախագահ Ա. Հովհաննիսյանի, 12 փետրվարի 2013 թվականի N 16 գրությունը և հաշվի առնելով որ „Հայաստանի ավագանիների ասոցիացիա„ հասարակական կազմակերպությունը նպատակամետ աշխատանք է կատարում համայնքի ավագանիների ինստիտուտի կայացման ուղղությամբ

համայնքի ավագանին որոշում է

„Հայաստանի ավագանիների ասոցիացիա„ հասարակական կազմակերպության գործունեությանն աջակցելու նպատակով՝ կազմակերպության հաշվի համարին փոխանցել 50000 դրամ՝ համայնքի պահպանման ծախսերի „Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն /01.06.01.51/նախահաշվի„ Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին„ հոդվածից:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

28 ՄԱՐՏԻ 2013 ԹՎԱԿԱՆ 14-Ա

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԵՎ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի 947-Ն որոշմամբ, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 24 փետրվարի 2011 թվականի N164-Ն որոշումը, խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Բերդի համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը՝ համաձայն N1 հավելվածի:
2. Հաստատել Բերդի քաղաքապետարանին առընթեր բնակարանային հարցերով հանձնաժողովի կազմը՝ համաձայն N2 հավելվածի:
3. Հաստատել Բերդի քաղաքապետարանին առընթեր վարչական հարցերով հանձնաժողովի կազմը՝ համաձայն N3 հավելվածի:
4. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2009 թվականի մարտի 13-ի N 30-Ա որոշումը ,,Բերդի քաղաքապետարանին կից հանձնաժողովների կազմերը հաստատելու մասին,,:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված 1

Բերդի համայնքի ավագանու
2013 թվականի մարտի 28-ի
N 14-Ա որոշման

Մաճկալյան	Արևիկ	- աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի նախագահ
Մանուչարյան	Մարիետա	-,,Տավուշի կանայք,, ՀԿ-ի նախագահ, հանձնաժողովի անդամ
Աբգարյան	Անահիտ	-թիվ 4 հիմնական դպրոցի տնօրեն, հանձնաժողովի անդամ
Մելիքյան	Արմեն	-Սոցիալական ծառայության Տավուշի տարածքային գործակալության առաջատար մասնագետ հանձնաժողովի անդամ
Արամյան	Ալվարդ	- աշխատակազմի առաջատար մասնագետ, հանձնաժողովի քարտուղար

Հավելված 2

Բերդի համայնքի ավագանու
2013 թվականի մարտի 28-ի
N 14-Ա որոշման

Մանուչարյան	Հարություն	- Բերդի քաղաքապետ, հանձնաժողովի նախագահ
Պապյան	Դերենիկ	-Տավուշի տարածքային զինկոմ, հանձնաժողովի անդամ
Մաճկալյան	Արևիկ	- աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի անդամ
Ներսիսյան	Արտուր	-համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ
Գրիգորյան	Դավիթ	-մարզադպրոցի տնօրեն, հանձնաժողովի անդամ
Ապրեսյան	Մարտին	-զբաղվածության Տավուշի տարածքային կենտրոնի տնօրեն, հանձնաժողովի անդամ
Մելիքյան	Դավիթ	-աշխատակազմի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի քարտուղար

Հավելված 3

Բերդի համայնքի ավագանու
2013 թվականի մարտի 28-ի
N 14-Ա որոշման

Մանուչարյան	Հարություն	- Բերդի քաղաքապետ, հանձնաժողովի նախագահ
Մաճկալյան	Արևիկ	- աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի քարտուղար
Մելքումյան	Հրաչիկ	-քաղաքապետարանի աշխատակից, հանձնաժողովի անդամ
Մաթևոսյան	Ազնիվ	- քաղաքապետարանի աշխատակազմի բաժնի առաջին կարգի մասնագետ, հանձնաժողովի անդամ
Սարգսյան	Վրեժ	-Տավուշի ոստիկանության Բերդի տեսուչ, հանձնաժողովի անդամ
Գևորգյան	Մանվել	-քաղաքապետարանի աշխատակից, հանձնաժողովի անդամ
Շաքարյան	Արմեն	-քաղաքապետարանի աշխատակից, հանձնաժողովի անդամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, գ. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

28 ՄԱՐՏԻ 2013 ԹՎԱԿԱՆ 15-Ա

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2002 թ. հոկտեմբերի 8-ին Բերդի համայնքի ավագանին Բերդ քաղաքի Այգեստան փողոցի 2-րդ նրբանցքը, որի վրա գտնվում է մեր հայրենակից, տաղանդավոր արվեստագետ Վիլիելմ Մաթևոսյանի տունը, անվանակոչել է Վիլիելմ Մաթևոսյանի անունով: Սակայն որոշման մեջ ,,Այգեստան փողոցի 2-րդ նրբանցքի,, փոխարեն նշվել է ,,Այգեստան 26ա փողոցը,,:

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետով

Համայնքի ավագանին որոշում է

Բերդի համայնքի ավագանու 2002 թվականի հոկտեմբերի 8-ի ,,Բերդ քաղաքի Այգեստան 26 ա փողոցը Վիլիելմ Մաթևոսյանի անունով անվանակոչելու մասին,, որոշման մեջ կատարել փոփոխություն. ,,Այգեստան 26ա փողոցը,, բառերը փոխարինել ,,Այգեստան փողոցի 2-րդ նրբանցքը,, բառերով:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Ընկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

28 ՄԱՐՏԻ 2013 ԹՎԱԿԱՆ 16-Ա

11-002-0127-005 ԾԱԾԿԱԳՐՈՎ 2427 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պետական առաջին գրանցման ժամանակ Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող Բերդ քաղաքի Իսահակյան 8/3 հասցեում գտնվող 11-002-0127-005 ծածկագրով 2427 քմ մակերեսով հողամասը՝ քարտեզագրման ընթացքում սխալմամբ չափագրվել և հաշվառվել է Հարազատ Գևորգի Սարգսյանի անունով:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է

Հաստատել համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը. 11-002-0127-005 ծածկագրով 2427 քմ մակերեսով Բերդ քաղաքի Իսահակյան 8/3 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասը ճանաչել համայնքի սեփականությունը:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

28 ՄԱՐՏԻ 2013 ԹՎԱԿԱՆ 17-Ա

ԲԵՐԴ ՔԱՂԱՔԻ ՍԱՐԱԼԱՆՋԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 15 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՈՒ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2013 թվականի հունվարի 24-ին Բերդի քաղաքային համայնքը դիմել է ՀՀ Տավուշի մարզի 1-ին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ Աշխեն Ենգիբարի Ղազարյանի անվամբ Բերդ քաղաքի Սարալանջի փողոցի թիվ 15 հասցեում հաշվառված բնակելի տունն ու տնամերձ հողամասը անժառանգ ճանաչելու և դրանց նկատմամբ Բերդի քաղաքային համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու պահանջներով:

Դատարանը, հիմք ընդունելով գործում առկա ապացույցներն այն մասին, որ Սարալանջի փողոցի թիվ 15 հասցեում գտնվող բնակելի տունը սեփականության իրավունով պատկանել է հանգուցյալ Աշխեն Ենգիբարի Ղազարյանին, վերջինս ժառանգներ չունի, 28.12.2004 թ. Աշխեն Ղազարյանի մահից հետո նրա ժառանգական զանգվածի նկատմամբ օրենքով սահմանված ժամկետում ժառանգություն չի բացվել, չկա նաև նրա անվամբ գրանցված կտակ, գտել է, որ հանգուցյալ Աշխեն Ղազարյանի ժառանգական գույքը՝ Բերդ քաղաքի Սարալանջի փողոցի թիվ 15 հասցեում գտնվող բնակելի տունը, ձեռք է բերել անժառանգ գույքի կարգավիճակ, որը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1224-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, պետք է անցնի ժառանգության բացման վայրի համայնքի սեփականությանը:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ Տավուշի մարզի 1-ին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 27.03.2013 թ. թիվ ՏԴ1-0029/02/13 վճիռը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

համայնքի ավագանին որոշում է

Հաստատել համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները և Բերդ քաղաքի Սարալանջի փողոցի թիվ 15 հասցեում գտնվող բնակելի տունն ու տնամերձ հողամասը ճանաչել Բերդի քաղաքային համայնքի սեփականությունը:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, գ. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

28 ՄԱՐՏԻ 2013 ԹՎԱԿԱՆ 18-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով և ,,Հայաստանի ավագանիների ասոցիացիա,, հասարակական կազմակերպությանը ֆինանսական աջակցություն տրամադրելու նպատակով

համայնքի ավագանին որոշում է

Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 50000 դրամ ուղղել համայնքի պահպանման ծախսերի ,,Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն /01.06.01.51/ նախահաշվի ,,Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին,, հոդվածին /4819/:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան